


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 ձր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Հիմա թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ծանոցման տարի
20 ամսեայ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Յ Ե

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравуникъ“

ВАРНА

Գրութիւնք եւս
չեմ տրուիր

Վ Ր Ի Պ Ա Կ

Մեր նախորդ թիւի առաջին սիւնակի 15րդ տողին մէջ «Ա. Աստուածածին կալուածները» պէտք է ըլլայ «Ա. Աստուածածին կալուածները»։ Նոյնպէս միեւնոյն սիւնակի 29րդ տողի «Աստուածածին կալուածները» պէտք է ըլլայ «Աստուածածին»։

ՈՌԻՍԱՀԱՅՈՑ ԿԱՆՈՒՄՆԵՐՈՒ Խ Ն Գ Ի Ր Ը

Կովկասէ ստացուած նամակներէ և թերթերէ հետեւեալ տեղեկութիւնները կը բաղկան։

Կովկասի կառավարչապետ իշխան Կալիցին նախ նախարարաց խորհուրդին ներկայացուցած էր ռուսական Հայաստանի Հայ եկեղեցւոյ կալուածները դրամաւոր ծրագրերը։ Կալիցին որ հայց երդուեալ թշնամին է, յայտարարած էր թէ եթէ իր առաջարկած ձեւով զոր ծագել չ'որոշուի ինք պաշտօնէն պիտի հրաժարի։ Խճիւրդը ընդ նիւտ համար Բերքապուրկ գումարուած նախարարական ժողովին մէջ ռուս Սինոդի ընդհանուր դատաւար Ժաննով յետագիծական Բոպիւտովսկիէն եւ ներքին գործոց նախարար Բելեկէն միայն ուժ տուին Կալիցինի ծրագրին, միւս բոլոր խորհրդականները անոր հակառակեցան։ Մ. Տը Վիթթէ, եւ լեւաւորական նախարար Ժաննով-Րապէս իրեն կարելի եղած ամէն միջոցները ի գործ դրաւ որպէս զի այդ ծրագիրը մերժուի, սակայն Չարը հաւանութիւն տուաւ ծրագրին որ հակառակ մեծամասնութեան ընդդիմութեանը ընդունուեցաւ միայն սա տարբերութեամբ (զոր կը պարտինք Մ. տը Վիթթէի միջամտութեան) որ կալուածները փոխանակ պետութեանէն զերաւուելու, հրովարտուի հրամայէ հայ կղերին սեփականատիրութիւնը միշտ ճանչնալով, ռուս կառավարութեան վարչութեանը կենսականութիւն։

Կովկասի հայոց մէջ յո զուժը

խիստ մեծ է։ Ժողովուրդի ամէն դասակարգը չափազանց յուզուած է։ Ամեն ալ համաձայն են իշխանի նոր կարգադրութեանը երբեք չընդունելու։ Ամէն կողմերէ պատուիրակութիւններ եւ հարազատութիւններ կը հասնին Էլմիածին խնդրելով որ կաթողիկոսը իր հաճութիւնը չը տայ ու մերժէ։

Էլմիածին մէջ գտնուող կառավարական ներկայացուցիչ Պրուկորին կաթողիկոսը ձգձգող պատասխան մը տալէ վերջ, ներքին գործոց նախարարէն սահմանադիրը կատանայ։

Տեղական ժողով թէ յունիս 12ի Բարձրագոյն հրամանի կատարումը եկեղեցական ստացուածքներու մասին կը ձգձգէ, կը խնդրէ Զեր սրբութեանէն անմիջապէս կարգադրութիւն ընել այս մասին։ ամէն յապաղում, թագաւորի կամքին անհաշտեցութիւն համարուելով, ծանր հետեւանքներ կուենայ։

Այս հեռագրին դէմ Վեհ կաթողիկոսը տուած է հետեւեալ պատասխանը, զոր կարտաւարէր Արմենիաի վերջին թիւէն։

«Պետերբուրգ, ներքին գործերի նախարարին։

«Այլի առաջ ունենալով որ նախարարները կոմիտէտներին յունիս 12ի Բարձրագոյն հաստատուած կարգադրութիւնն եղած է առանց նախապէս իմ միջոցաւ տեղականաւոր, ինչպէս որ այդ դրոժագրուել է համանման զեպքերում իմ նախորդների որով, այն հանգամանքների մասին որ կառավարութիւնը կարող էր ուշադրութեան չտանել, կողմակցող ի չորսն օգոստոսի պատուիրակի Սինոդին չը հրատարակել առ այժմ Բարձրագոյն հրամանը եւ թողնել ինձ իրեն եկեղեցւոյ ծայրագոյն պետի՝ ամենահպատակօրէն խնդրելով զիմէ Նորին Մեծութեան թագաւոր-կայսեր եւ բացառելով այդ հարցի հետ կապուած հանգամանքները։ Սինոդն ստանալով իմ կանգալը, կարգադրել է զեկուցում կազմել այդ գործի մասին, բայց պրոկուրոր Կանչելին այդ թոյլ չէ տուել, որով կարծես ցանկացել է հակառակ օրինաց ինքնագրուել որոշել Սինոդի օրագրական վճարի ձեւը եւ բովանդակութիւնը։ Այս մասին Սինոդում կազմուել է արձանագրութիւն որ եւ մատուցուեցաւ ինձ բոլոր անդամաց ստորագրութիւններով։ Սակայն ի նկատի ունենալով որ այս խնդիրը շատ լուրջ նշանակութիւն ունի ամբողջ Հայաստանեայց եկեղեցու համար եւ կարող է խիստ ոչ ցանկալի հետեւանքներ ունենալ եւ այս ակնյայտի է, ի թիւս այլոց, եւ այն իրողութիւնից որ յուլիսի 29ին

Ալեքսանդրապոլում եւ օգոստոս 3ին այստեղ Ս. Էլմիածին ժողովրդական ամէն կարգերից մեծ բազմութիւն անձամբ, այլ եւ բոլոր համայնքներ բազմաթիւ հանրագիրներով ամէն օր դիմում եւ աղերսում են ինձ արկանել առ ոտս Նորին Մեծութեան ամբողջ Հայ ազգի աղաչանքն այս մասին, խոնարհաբար խնդրում եմ Ձեր բարձր Գերագոյնցութիւնից առժամանակ յետաձգել կառավարութեան նոր կարգադրութեան կատարումը եւ հնարաւորութիւն տալ ինձ ամենահպատակօրէն մատուցանելու Նորին Մեծութեան իմ այս դիմումը համարում եմ մի գործ, որը թելադրում է ինձ եկեղեցու պետի պարտուց զգացումը առ ծայրագոյն հովանաւորող Նորին թագաւոր-կայսեր եւ առ հօտն իմ։

Ասոր դէմ նախարարին պատասխանը ուշանալով, կաթողիկոսը ուղղակի Չարին կուտայ հեռագիր մը, որով կը բացատրէ թէ նախարարը ուշացուցած է իր պատասխանը և ինք ստիպուած է կայսեր դիմել խնդրելով որ իրեն թոյլադրուի Բերքապուրկ երթալ և անձամբ ներկայաւոր Ն. Վեհափառութեան, բացատրութիւններ տալու համար հրատարակուած օրէնքի մասին։

Քանի մը օր յետոյ ներքին գործոց նախարարը հեռագրով մը կը յայտարարէ թէ «Ինձ ուղղուած հեռագիրը զեկուցանելուց յետոյ կայսրը բարձրագոյն ամենողումածառք(?) մերժելով Չար խնդրը բարձրագոյն հրամանի կատարման յետաձգութեան մասին, Օգոստոս 10ին կայսեր ուղղուած հեռագիրը ինձ յանձնուեց, որով հաղորդում եմ ձեզ մանրամասն ցուցումներ ծանր հետեւանքների նկատմամբ, ընդդիմադրութիւններ շարունակելու դէպքում եւ ձեր Պետրապուրկ գալով Ն. Կ. մեծութեան ներկայանալու մասին»։

Էլմիածին հաւաքուած առաջ նորքները, Առաջն. փոխանորդները, Վանահայրերը եւ միաբանութիւնը այս պաշտօնական գրութիւններէն յետոյ, երկար խորհրդակցութեամբ, որոշած են ընդդիմանալ օրինական ճանապարհով։

Առանց ընդդիմութեան գործերը յանձնող մէկ քանի քահանաներ կարգադրած ընել և ծանր պատժոյ ենթարկել որոշուած է Էլմիածին մէջ։

Արմենիաի թղթակիցը կըսէ «Վեհափառն արի է 30 տարեկան

մի անձնուէր երիտաւորի նման»։ Իսկ դաւադիր իշխան Կալիցին իր կեանքէն կը վախնայ և կըսուի թէ իր զգեստին տակէն զրահ կը հագնի։ Ժողովուրդը իր դէմ գործընդունած է։ Երկու անգամ երբ անտառէն կանցնէր, գնդակ արձակուած է վրան, բայց գնդակները ներս չեն տնցած։

Արո Արմենիաի թղթակիցը վերջին լուրը հաղորդելէ յետոյ կը յարէր «Եթէ ռուս կառավարութիւնը պիտի իր որոշման վրայ, ասոր հետեւանքը այն պիտի ըլլայ որ Հայերը Սիսի փոխադրեն հայկական եկեղեցւոյ կեդրոնատեղին, այսինքն Սիսի կաթողիկոսը ճանչնան հայկական եկեղեցւոյ գերագոյն պետ (այս բանը միայն հայ ժողովուրդի կամքէն կախեալ է)»։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Վերջերս հետեւեալ հետաքրքրական խօսակցութիւնը տեղի ունեցած է նախարարապետ Բաշո Բէթրովի եւ թուրք կառավարութեան գործակաւար Ալի Ֆէրուի պէյի միջեւ։

— Տիւրք Բէթրով, պատերազմական պատրաստութիւններու մասին վերջերս ձեր ձեռք առած միջոցները կասկածելի կերեւան ինձի, ըսաւ թուրք գործակաւարը։

— Ինչո՞ւ կասկածելի։ անոնց մէջ արեւակաղ բան մը չկայ։

— Ի՞նչպէս չկայ, պահեստի զօրքը զէնքը կը կանչէ, սահմանադրութիւնը զինուորներ կը դրկէ եւ դարձեալ կըսէ որ բան մը չկայ։

— Հապա դուք ինչո՞ւ համար այնչափ հազարաւոր զինուորներ գումարեցիք սահմանադրութիւն վրայ։ Թէ ասոնք խաղաղապիւրական նշաններ են։

— Մեր զինուորները, պատասխանեց Ֆէրուի պէյ, սահմանադրութիւնը պաշտպանելու համար հոն դրկեցինք։

— Է՛հ մենք ալ ճիշդ ասոր համար զօրք պիտի դրկենք հոն։ Դուք միշտ կը բարկանայիք որ սահմանադրութիւնը չենք պահպաներ։

— Այնպէս է. բայց հոս ուրիշ բան մը կը դառնայ. կը տեսնեմ որ ժամանակէ մը ի վեր ուրիշ ի՞նչ մը կը փչէ հոս։

— Պարո՞ն, Պուլկար կառավարութիւնը ամեն ինչ ըրաւ որպէս զի լաւ եւ բարեկամական յարաբերութիւններ պահպանէ թուրքի հետ։ Յեղափոխականախոնարհներն ցրուեցէք ըսիք, ցրուեցինք. սահմանադրութիւնը փակեցէք ըսիք այդ ալ ըրինք. ձեր պահպանները (հոս խօսակցութիւն թուրքերե-

նի դարձուցին զի Տ. Բէթրով լաւ տաճկերէն կը խօսի) Բայց ինչ բըստ ձեր կառավարութիւնը : Խաղաղ բնակիչները չարչարեց , փոխանակ ապրտամբները հալածելու : Նայեցէք մէյմը Մանասկի Պէթրովի նախնիներն : Այս ինչ խաղաղակութիւն է . կրնա՞նք եւ աղաքը կապանութիւն , եկեղեցիները կը սրբապղծուին . վարժարանները կը գոցուին . դեռ ո՞ր մէկն ըսեմ . այս բաները մարդուս զայրոյթ կը պատճառեն : Լրագիրները չէք մի կարգար : Մենք այլեւս չենք կրնար պաղարկուել ինքեանս : Կանգնեալս ըլլալ այս ամենուն :

— Ըսել է պատերազմ պիտի ընէք :
— Ձեռքերնէս եկածը պիտի ընենք , պատասխանեց , Տիար Բէթրով եւ շարունակեց . պէտք է որ զիրար հասկընանք միմեկեւոր ընդ միշտ :

— Կաղաչեմ , ես չըսի որ բան մը չպիտի ընենք . պիտի ընենք ամեն ինչ որ կարելի է , միայն թէ սա ապրտամբութիւնը քիչ մը խաղաղէր :

— Պէ՛յ , խօսքը տապալակի մէջ չի մտնէր . զուք բան մըն ալ ընելիք չունիք :

— Լա՛ւ , բայց ի՞նչ է ձեր պատրաստութիւնները շարունակէք , կրնայ ըլլալ որ սահմանադրութիւն վրայ զօրաց բաղնաւ մը տեղի ունենայ , բան մը որ զօրուար կացութեան մէջ պիտի դնէ Պուլկարի թուրք բնակչութիւնը :

— Ի՞նչու համար , ի՞նչը պակաս է անոր , վարժարաններուն եւ մզկիթներուն ծախքը կը հոգանք . ազգային երեսփոխան ըլլալ կուզեն՝ անոր ալ արգելք դրած չենք . դեռ փորձանքնին կուզեն : Եթէ այնչափ կը մեղքոնաք զանոնք , առէք հետեւին : Պուլկար տարէք : Արդէն ձեր թուրք քարոզիչները օր մը մահմետական բնակչութեան խելացի խորհուրդ մը չտուին : Դարձեալ կը կրկնեմ մենք չենք կրնար այլեւս զիմադրել հանրային կարծիքին մէջ յառաջ եկած հոսանքին : Մե՛ղք սակայն որ Կ. Պոլսոյ ձերայինք չեն կարող հասկնալ թէ որչափ գէշ կընեն , այսպէս մատերնուն մէջէն նայելով իրողութեանց ընթացքին : Բայց այս մասին ճաշէն վերջն ալ կը կը խօսինք դեռ : Ժամը մէկն եղաւ երթանք ճաշելու :

Պ. ՏԸ ԼԱՆԵՍԱՆ
ԵՒ
ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՆՆԴԻՐԸ

Մակեդոնական խժողութեանց գէմ բողոքող ֆրանսական նոր եւ ազգու ձայն մը կը բարձրանայ :

Նախորդ ծովային նախարար պ. աը Լանէսան «Մակեդոնիա եւ Ֆրանսա» խորագրին տակ կը գրէ Սեպտ. 15-ի Սիեյլը-ին մէջ , Պ. աը Լանէսան չընդունին ներկայ նախարարապետին կարծիքը թէ արդի տաղանապալի կացութիւնը ֆրանսական շահերու հետ առնչութիւն չունի : Հայկական կոտորածներուն ժամանակ եւ թրքո-ձէլլէն պատերազմէն անմիջապէս առաջ ալ այս ձեւով յայտարարութիւններ եղած էին : Այն ատենի Արտաքին գործոց նախարարն ալ յայտարարած էր թէ Հայաստանի մէջ գործադրուած եպիսկոպոսները ո եւ է կերպով ֆրանսական շահերուն չէին վնասեր : Պ. Բոմպի նման , ան ալ Եւրոպական պետութեանց համաձայնութեան վրայ կը հանդէս շարժուին ծաւալումը կարեւոր արգելիչու համար :

Պ. աը Լանէսան կը յաւելու .
«Մեր մէկուսացումին հետեւանք-աները չեն կրնար մոռցուած ըլլալ ,

«մէկուսացում մը , որ պէտք է յիշենք , արդիւնքն էր Ռուսականին , «որ իր Ասիական շահերու չափազանցօրէն տարամերմ մտահոգութիւննեւրովը կուրացած էր : Կոտորածներէն «եւ Յոյներուն կրած պարտութենէն «վերջ , մեր չափազանց անտարբեր կամ «չափազանց սկէպտիկ դիւանագէտները «կարողացան տեսնել թէ ոչ միայն դիւանագիտութիւն անբարոյական դեր մը «կատարած էին Անգլիոյ կողմանէ իւրենց ներկայացուած առաջարկներու . «հանդէպ ակամփոքն քոցեղով , այլ նա- «եւ անսան թէ իրենց անգործութեամբը Պոլսոյ մէջ դեմոնական գե- «րակշիւ դիրք մը ստեղծեր եւ զայն «ապահովէր էին : Արդեամբ , անոնք «1870-ին մեղ նուաճողներու շահուն «համար աշխատեցին : Անոնք իրենց «ձեռքով Գերմանիոյ փոխանցեցին Ա- «րեւելեան Միջերկրականի մէջ այն «հեղինակաւոր դիրքը որ մինչեւ այն «ատեն կը գրաւուէր Ռուսիոյ , Ֆրանս- «այի եւ Անգլիոյ կողմանէ : Սմբողջ «ֆրանսական ժողովուրդը հասկցաւ «այն րոտին թէ իր նախարարները զինք «խաբած էին . ինքզինքին զօրաբու- «թիւնէ ազատած ըլլալու համար անոնք «այն ատեն յայտարարեցին թէ հայ- «կական կոտորածները եւ կրէտական «ապստամբութիւնը մեր շահերուն վր- «տանք չէին սպառնալ :

Պ. աը Լանէսան կըսէ թէ ինք ալ պ. Բոմպի չափ խաղաղութեան պահպանման համակիր է եւ ճիշդ այդ պատճառաւ իսկ կարեւոր կը նկատէ զայն ապահովել հանդէպ անձամբ հաւանակութեանց , որոնց կրնան առաջնորդել ներկայ պարագաները : Որպէսզի կարելի ըլլայ խաղաղութիւնը տեսական ընել ինք անհրաժեշտ կը համարէ , առանց ժամկէտաւ ըլլալու , վերջ մը դնել թրքական եւ պուլկարական նախճիրներուն : Հո- կառակ պաշտպանի կը կարծէ թէ ան- կարելի պիտի ըլլայ մակեդոնական ան- կարգութեանց ծաւալումը արգելել զէպի դրացի երկիրները : Պուլկարեա եւ թերեւս Սերպիա , այս վերջինին թագաւորը հաւանականաբար պիտի փորձուի ինքզինք ներքին խռովու- թիւններէ ազատել ջանալ , արեւմտիկ ձեռնարկի մը միջոցաւ , որով կարելի ըլլայ իր սպաներուն ուշադրութիւնը իրենց ներքին կռիւններէն այլուր դարձնել :

Մինչ Պ. աը Լանէսան դիտել կու- տայ թէ այս կացութեան տեղեակ ու- թիւ պետութիւններ կան , սակայն ինք կը կարծէ թէ ինքզինք առաջ բե- րելու համար Ֆրանսա միայն կրնայ նախաձեռնարկ ըլլալ : Իր խաղաղա- սիրական զգացումները Եւրոպայի քաջ ծանօթ են , նոյնպէս յայտնի է թէ Պալքանիներու մէջ ան ո եւ է փառա- սիրական ձգտում չը կրնար ունենալ եւ թէ Միջերկրականի մէջ արդի դո- յութիւն ունեցող աշխարհագրական վերճակին պահպանման փափաքող է եւ հետեւեալաբ ուրիշ պետութիւններէ կրնայ զօրաւոր օժանդակութիւն ակն- կալել :

Այս կարծիքները արտայայտուած ըլլալով նախկին ծովային նախարարի մը կողմէ բաւական կարեւորութիւն ունին :

ՀԱՐՈՒԱԾԸ

Հիւսիսային բոնակալ կայծրու- թեան մը խորքէն արեւուն հոտեր կը հասնին մեզ , հոտեր մարդկային ան- մեղ արեւան՝ մեր հարց եւ եղբարց :

մահատու հարուածը սակայն այս ան- զամ մահիկէ չէ որ կընդունինք . այլ խաչէն : Իրիստոնէից պաշտպան՝ ու գերեզմանի ազատարարն յորժուրդող պետութեան մը ոչ-քրիստոնէական ո- թոշումը նուիրագործեալ կայսերական գուցէ բացարձակ հաճութեամբ , հայ ազգըկը կանգնեցնէ անդունդի մը եզ- ըր , որուն անհաստակութեանը մէջ պարզ եւ մէկին կերպով կընդունարուի հայութեան պարբերաբար բայց ան- սայլմաք կըրուտը ու ուժացումը :

Հրամանը բարձրէն կուգայ , հետե-ւաբար հայը կը պարտէր ոչխարային կատարեալ հլովի համար մը անոր հնա- զանգիւ . եւ կամ հակառակ պարագա- յին իր կեանքովը տուժել : Կովկասեան մէկէ աւելի բազմահայ քաղաքներու մէջ , իրաւագուրկ հայը ժողովրդային կատարելապէս անմեղ ցոյցներով եւ միշտ օրինաւորութեան սահմանէն դուրս չենեղու պայմանաւ , ուղեց ցոյց սալ հանուր աշխարհի եւ մանաւանդ տիրող բռնակալութեան , թէ հայն այնքան հեշտին չէ կարող հաշտուել ազգային այն անարկու գրկանքին հետ որ կու- գար զինքը մահացնել . բըցնելով ան- վթաբար իր սրտին իր է՛ն կենսատու երակներէն մին :

Մահացու սարսաղագիւղիկ ճիւղը , իր բովանդակ զարհուրելիութեամբ ցցուած մեր առաջ , մեզ դէպի կո- րուած Կոռաշնորդ . սակայն բողո- քարկու հայը սթափուած եւ առաւել քան երբէք գոտնադիւար , յառաջնա- լիք ամեն պատահականութիւն եւ պա- տահար առ ոչինչ համարելով՝ բողոքի ձայն բարձրացուցած ամէն գնով ու խ- տած է պաշտպանել իր հնաւանդ իրա-ւունքներն եւ Ազգ. սեփականութիւնը :

Փողոցներու մէջ ու սալաշատակե- րու վրայ ինկած տառնակներով հայը պերճաբոս կերպով եւ շատ պատուա-ւոր եղանակաւ անգամ մը եւս եկաւ փաստել , թէ ան գիտէ լայնարաց զի- մեկ հոն , ուր Ազգային եւ անհատական արժանապատուութիւնը անօրէններու ոտից կոխան կը լինի այնքան անխիղ- ճօրէն :

Հոս , կիսամեռ երկտառաբ մը գե- տին փռուած անէժք կը տեղայ բըս- նակալին հասցէին . հոն՝ լոտանեաց հայր մը արեւնաթաթաւ վրէժ կը կը- տակէ լուր որդւոյն . սակայն լուր ո- թոշումը մէջ անյողողող բռնակալութե- թիւնը , մինչեւ երկիրնք քարձրացող տիեզերաց արարչին ականջներն խլաց- նելու չափ բարձրագոյ ազդակներուն առջեւ ժայռ կարած , թոյլ կուտայ իւր խղճին որ միլիոնաւոր ժողովրդե- ան զարեւու երկար հոլովման մէջ պուտ առ պուտ կուտակուած միլիո- նաւոր ռուպլի արժէքաւոր ազգ . հա- լըստութիւնը վարկանի մը մէջ ոչնչ- շանալու չափին երկարելուի :

Վերահաս հարուածը ուժգին էր եւ միմեկմայն ցնցիւ . օրհասական հայը պահ մը ուշքի եկած , արդար ըմբոս- տութեամբ մը փորձեց հարուածը հա- կալուել , կամ գլխ գայն չէգոքացնել . ու մէկ ձեռքով իր անբռնաբարիկ համարած իրաւանց ուժգին մը փարած , իսկ միւսով ինդրամատոյց , պաշտո- նական եւ անպաշտօն անձնաւորու- թեանց գլխութիւնը կը հայցէր . բայց աւա՛ղ , հիւսիսային գիշակեր արծիւը իւր անյայտ մագիլները լայն մը բա- ցած , ուժին ամբողջ թափով իր ողբը կուգէ յօշոտել . թոյլ չի տարվ անոր մինչեւ իսկ ճիւղ մը արձակել , հառաջ մը հանել ալեւացաւոր սրտին խորէն , հառաջ մը անէժքի եւ լրէժիւնդրու- թեան . եւ ահա՛ կըլուտ պատու մայ հայն կերթայ ըլլալ անկուշտ . . . բեր- նին մէջ , պատու մը սակայն փշոտ եւ թերեւս զօրաւորամայս :

Պետական խորհրդանշան արծիւը , որուն աւանդակն նշանաբանը եղած է եւ պէտք է լինի իր լայնատարած թեւերուն տակ սկաւրներուն առաջնա- կանութիւն ցոյց սալ ու անգործ հո- վանաւորել . այլ ի՞նչ հեղուկութիւն : Ընդհակառակն-ճգմիւ :

Ձի թերահաճ մեր պարտականու- թեանը մէջ , ընե՛նք ա՛յն ինչ որ մեր ուժը մեզ կը թոյլադրէ . միշտ չըջա- հայեաց լինինք . եւ մաղթենք նախ որ երկինք իւր պահեստի գլխութեան գէթ կաթիլ մը ներարկէր թագակիր- ներու սրտին մէջ , եւ աղօտ լոյս մը արդարութեան ճառագայթէն իբրեւ ուղղիցող այդ մեծ մոլորեալներու , իսկ մեզ՝ յարատու կամք ու անհու- ոյի արեւաբար դիմագրաւորելու ամէն պատահարներու :

ՎԱՍԻՍԻ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԲՈՒՍՉՈՒՄ, 8/9 1903

.....

Ինչ կը նշանակէ խմբագրի մը լու- թիւնը՝ կատարուած անիրաւութեանց հանդէպ . միթէ՞ ճշմարիտ հրապարա- գրութիւնը անօրութեան կատաշնորդէ խմբագրի . եթէ այդպէս է , ըստ մեզ , աւելի լաւ կըլլար առանց մամուլի մնալ եւ ուրիշներու անօրութեան պատճառ չըլլալ . միթէ՞ ապրուելու համետ միջոցներ կը պակսին . ինչո՞ւ իրեն իրենց իսկական գոյնով երեւան չհանել , չգովել անոնց լաւ կողմերն ու չձողկել կամ չուղղել՝ սխալները :

Սխալը կը գործուի : Անպարտեք առաջնորդը անակցունք հետեւորդներ կուենայ : Միջավայրը կապականի եւ գրութիւնը ընդհանրապէս կը վատաւ- րանայ : Չար օրինակի փոխանցիկ հե-ւանդութեան մը պէս ուրիշներն ալ կը վարակէ : Թեթիւ որ ինքնադիտակ- ցութիւն պիտի քարոզէ՞ , կը դառնայ բարեբու ապականիչը : Ինքնիրմով , իր շուրջը դարձաներով հետաքրքրու- ողներու թիւը հետզհետէ կը նուազի եւ հասարակաց գործերը քմահաճ հոս- կանութեան ձեռքը խաղալիք կըլլան : Գպրցին չըրածը թիւին ալ չըրաւ . եւ ահա տգէտ ժողովուրդը՝ շահագոր- ծող առաջնորդներ ունեցաւ : Օր մըն ալ կը նային վիճակ մըն է կը փրթի . խնդրոյ առարկան գործուած անիրա-ւութիւն մըն է անչուշտ :

Ըսածիս իբր ապացոյց եկեղեմ տե-ղական խնդիրներ մէջ լուրել . նախ՝ առնենք մեր թաղ . նորհուրդը , որ հակառակ ժողովուրդի կամքին , անց- եալ տարի , բանկալ մը չինեց—բողո-քողները՝ չինուելէն՝ հալը երեւան եկան . բայց անօր . . . չինուած էր . Բ. Աղաախանամի Գործադիր Ժողովը , որ թէեւ ո՛չ միայն մատուց մը չինե-լու՝ նոյն իսկ այդ տեսակ գաղափար մը յղանալու տիրականութիւնը չէր ունեցել , այսօր , վերջապէս , զայն յղացող քանի մը խօսք չկոտորելի մանկուր գործիքն ըլլալու անգուսպ փափաքով , որ խաթրինաճութեան երկրէրած փափկան՝ առութեան հետե-ւանքն է , հակառակ ընդհ. ժողովի ս-րոշումին—մատուց չինութեան հա-մար եւկարող անգամ ընդհ. ժողով գումարել—մատուց երկու անգամիկ վերածէ . անցեալ մեղքի շարաթ . . . Տէր Մկրտիչը սոսօք փառօք գերեզմա-նատուն կը դրկէ առնուաքն 1000 ֆը-րանքին վրայ դամբանական մը կար-գալու համար . եւ արարողութիւնը կը

կատարուի անձայն անշուշտ : Որո՞շտ ինչին պէտք . անգին Մանկապարտէզի չէնքը արտոյի մը բոլոր մասնաշաղկու-թիւններով . . . եւ ձրի ըլլալու առա-ւելութեամբը « փառք քեզ Աստուած » կը գոչէ . բարձր դիրքի մը հասած ըլ-լալուն համար : Աղջկանց վարժարանը , հակառակ իր անարժան կոչումին , տակաւին չը դադարէ իր արջ ծառա-յիլէ :

Ահա վիճակը մեր կրթատուներուն : Խնդիրը , սակայն , միայն դրամը ա-նոցուտ կերպով ծախսելուն վրայ չէ . անգին բարոյական սխալը կայ :

Մատուռի շինութիւնը դեռ նո՞ր օ-րակարգի խնդիր կը ըլլայ (տես 1903, յուլիս 31-ի հրաւիրագիրը) : մինչդեռ հաշուեկէշին մէջ , եւքին կողմը 151,65 ֆրանքի ծախք մը կը տեսնուի մա-սուռի շինութեան համար : Քանի որ Մատուռի շինութեան որոշումը չէր տրու-ուած , ինչու եղած է այդ ծախք , իսկ եթէ որոշուած էր՝ ինչու : Օրակարգի խնդիր ընել : Եթէ գարմանք պատճա-ռող ուրիշ բան մըն ալ կայ՝ այդ արջ է թէ՛ առանց ընդէ . ժողովի գիտակ-ցութեան կարելի կը ըլլայ կանոնադրին մէջ փոփոխութիւններ անցնել . նա-խորդ Գործ . ժողովի կանոնադրը մա-սուռի շինութիւնը միայն կը տրա-մադրէ , իսկ այս նորը , որ չինք գի-տեր ինչ պատճառաւ փոխուած է՝ կրն երկու անգամի յաւելում մը կը կրէ միեւնոյն 8-րդ . յորոշածին մէջ : Ինչպէս կը ըլլայ որ կանոնադրի արջ կէտը թէ՛ ընկերութեան ունեցած ե-կամուտներուն 50 0/0 ն (աղքատներ-ուն) , 15 0/0 ն (աղքատ սաներու դասական առարկաներուն) իսկ 20 0/0-ը գերեզմանատան մատուռին շինու-թեան եւ մնացեալն ալ զանազան ծախ-քերու կը արամադրէ , մինչդեռ վար-չութեան ձեռքը տրուածը 8) 0/0 զա-նազան ծախքերու , իսկ 20 0/0 ն ալ մատուռի շինութեան կը արամադ-րէ : Երես ընդէ . ժողովի անդամներուն ձանձրութիւն չը տալու համար , մաս-նաւորներ փոխած են այդ կանոնա-դիրը : Ըստ մեզ , ժողովուրդի մասնա-կի անտարբերութիւնն ու թոյլ կող-մերը չհազարծելը՝ ձեր կը համար-ուի : Առ այժմ այսչափ :

ԽԱՐՈ

ԱԶԳԱՅԻՆ

ՍՕՖԻԱՅԻ Պատգամաւորի ընտրու-թիւնը կատարուել է կերակի օր , 7 սեպտեմբեր 1903-ին , առաւելութեամբ թէեւ ընտրուել է Տ. Տօթթ. Ս. Քիւչիւկեան , բայց ընտրողական ժողովը նկատելով որ քուէարկութեան ասին զիջում-ներ կատարուած են , ընտրութիւնը չեղելով պիտի համարէ եւ նոր ընտրու-թիւն կատարել պիտի ստի եղեր :

ԹՈՒՐԻ գրաքննութիւնը արգիլած է ուսումնայոց կալուածներու խնդրոյն մասին գրել . այնպէս որ Պոլսոյ թեր-թիւրը միայն « Եկեղեցական խնդիր » ըսելով անցնիլ ստիպուած են :

ՍՈՒՐԶԱՆԻԱՅԻ չորեքշաբթի օրուան թիւով կը գրէ . « Պոլսոյ գանուտը եպի-սկոպոստը Տ. Մեսրոբ , Տ. Բարթո-ղիմէոս , Տ. Գրիգորիոս եւ Տ. Վահրամ Արք. ները , ինչպէս նաեւ Տ. Հմայեան Տ. Մկրտիչ , Տ. Ներսէս , Տ. Գարբէլ եւ Տ. Գեորգ եպիսկոպոսները երէկ ա-ռաւօտ Ս. Պատրիարքին յախազահ-թեամբ նիստ ըրին եւ իրենց նախորդ բանաձեւին համեմատ , ստորագրեցին Եկեղեցական խնդրոյ մասին Ս. Պատ-րիարքին պատրաստած մէկ գիրը » :

ԿՈՒՂԱՍԻ քաղաքացիները Յոյնը գերազանցելու աստիճան յառաջացը են . Տ. Մեսրոպ արքեպ. Տփղիսէն էջ-միածին երթալու ասին դրամի քաղը յանգէտ գրպանահատներուն յանձնը է : Քանի մը օր առաջ ալ Գաւառիկե-ան եպիսկոպոս Եւլախ կայարանին մէջ 300 ռուպլի կը խցնէ գրպանէն : Մեղուրդ վարդապետի գրպանն ալ քը-սակահատներու այցելութիւնն կըն-դունի ի հաշիւ քանի մը տասնեակ ռուպլի :

ԳԱՀԻՐԵԻ Ս. Մատուածածին եկե-ղեցւոյն մէջ Առաջնորդ Տ. Յովսէփ ե-պիսկոպոսի նախագահութեամբ գում-րում մը տեղի ունեցած է ուսումնայոց Եկեղեցական կալուածներու խնդրոյ մասին : Տրուած որոշումը հետագրաւ հաղորդուած է Վեհ. Հայրապետին :

ՏՓՂԻՍԻ մէջ գանուտը հայոց եկե-ղեցական կալուածներու գրաւումը սեպտ. 1-ին սկսաւ կրնէ կուլիակ թեր-

թը : Ներսէսեան դպրոցի անշարժ կալ-ուածները եւ ուրիշ չորս բակի մէջ գանուտը խանութներ եւ չէնքեր ցու-ցակագրուած են : Մէկ օրուան մէջ գրաւուած գոյքերուն գումարը կը հասնի 250,000 ռուպլի :

Նոյն թիւթը հետեւեալ կը գրէ . « Օգոստոսի 29-ին Կարս քաղաքում Կուրիւնեան գնդի զօրանոցների ետեւ , խուլ փողոցում , Տանուի բնակարա-նում պայթում պատահեց , որից մա-հացան այնտեղ գտնուող չորս հայ , զբոսից թուում նաեւ բնակարանի տէր Տանուեւը , եւ ծանր կերպով վնասու-ուեց զբոսից մի քանի օր առաջ եկած ամերիկացի պատուի Ջոն Նախիկեան , որը չուտով մնաւ : Ինչպէս երեւաց հետազոտութիւնից , պայթումն առա-ջացել էր այն ժամանակ , երբ Նախիկ-եանը ծածուկ լցնում է հողի ձեռով նետերու րումբեր Բնակարանում խու-ղարկութեան ժամանակ գտնուած է ձեռով նետերու 38 ումբէ , երբ կար-սիւլ պայթուցիկ սնդիկ , բիկֆորդեան թոկ , գլխարկին , փխալին եւ այլ նիւթեր : Քննութիւնը շարունակուում է » :

ՎԵՀ. ԿԱՌՈՂԱՅԻՍԻՆ ուղղուած հանրագրութիւնը՝ որ անց ալ շարժու-պատրաստուած էր յանձնարարի մը կողմէ , քաղաքիս բոլոր հայերը առանց ու եւ անարկութեան կը ստորագրեն , այն համագումրով թէ անո՞ւ ոյ՞ տուած կը ըլլան Ամենայն Հայոց Հայրապետին որ մերժումին մէջ յամառի մինչեւ վերջին շունչը , վստահ ըլլալով թէ ամբողջ հայութիւնը անխափ իւր հետն է :

Ազգ. իրաւանց պաշտպանութեանը համար Ս. Հայրիկի նախաձեռնողութիւնը անվիճելի եւ անկասկածելի է արդէն . բայց ցաւալին հոն է որ ոռո-կառավարութիւնը , առանց նկատի առնելու Կաթողիկոսին մերժումը ու բողոքը , իր յափշտակութիւնը կը շարունակէ անմեղ գիտնելու . վրայէ անցնելով : Այս քառանկյունից իրողու-թեան հանդէպ կը կարծենք թէ այլեւս Կաթողիկոսին ուղղուած քաջալերա-կան հանրագրութիւնները անխմատ կը մնան , եւ հարկ է ըստ մեզ հայ ժո-ղովուրդի արդար բողոքի հաւաքական ձայնը ընդհանուր աշխարհի լսելի ընել ամէն միջոցներով :

ԹԻԱՊԱՐՏ ՈՒԶՈՂՆԵՐՈՒՆ

— Գ —

Պոլսեան հայ կարեւոր քաղաքները գտնուող մեր գրեթե ամբողջ արդէն զրկած ենք պէտք եղած քանակու-թեամբ թիւթի : Կատարէն . նոյն-պէս զրկած ենք Գահրէ . Աղէքաւ-զրիւ եւ Քանսիանց : Ուստի ստա-նալու համար պէտք է դիմել բացի Իրաւունքի խմբագրութեան հետեւեալ անձներուն :

Ռուսչուգ .	Տ. Սայգիս Մանուկեան
Ֆիլիպէ .	» Գրիգոր Թիւթիւնեան
Սօֆիա .	» Ասատուր Մկրտչեան
Պաշկաղ .	» Արտաշէս Հարենց
Սիւրիդի .	» Արթուր Սարգիսեան
Շուկա .	» Ասլան Տօնիկեան
Քոնստանդնուպոլիս .	» Սիւսիկ Մէլիքեան
Գահրէ .	» Կարապետ Էրզնկեցեան
Աղէքաւզր .	» Սահիւր Մազմանեան
Նաեւ քանի մը օրէն մեր շրջուն	գործակալին միջոցաւ պէտք եղած քանակութեամբ թիւթի :
Կալաց .	Տ. Ղեւոնդ քնն. Փափագեան
»	» Գրիգոր Յակոբեան
Սուլիւս .	» Արփիար Մարգարեան
Պոլսէն .	» Օնիկ Փափագեան
»	» Յ. Պիպէրեան
Պրախ .	» Ստեփան քնն. Կիւլիւեան

Իսկ Ամերիկայի մեր յարգող գործա-կալներէն ու բարեկամներէն ներողու-թիւն կը խնդրենք իրենց ապագան-քին մինչեւ ցարդ աչացած ըլլալուն համար : Այս յապագան պատճառ է քաթի ծախքին տարապայման ծախ-րութիւնը (հատին 50 սանդիկ) եւ տեղեւոյ չօգնաւային գործակալու-թեանց ուղղակի Ամերիկայի համար սնտուկ չընդունելու : Ուստի ստիպ-ուած ենք գրեթե ծանօթ ճամբորդի մը միջոցաւ զրկել որ քանի մը օրէն յետոյ հոսկէ ճամբայ պիտի ելնէ :

ՊԱՏԿԵՐ ՄԸ 1877-Ի

ՌՈՒՍՕ-ԹՈՒՐԻՔ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

(ՔԱՐԳ. Ք. Պ. ՆՕՐԱՍԻ ԲԱՅԱՅԻ ԲԱՅԱՅՈՒԹԵՆԵՆ)

Նախ արեւու մուտքէն անմիջապէս վերջ տասնիկ ձիւնատարաւ մը սկսաւ , որ յառաջիադարութեան մեծ արկիւղ մը եղաւ . երկրորդ , 50,000 հոգիէ բաղ-կացող բանակ մը եւ 120 թնդանօթներ , ծովու մա-կերեւելիք 8000 ոտք բարձր լեռնաշղթայի մը վը-րայէն անցնելու գործը թեթեւօրէն ստանձնելու բան մը չէր . եւ վերջապէս՝ վերջին երկար եւ արագ ըն-թացքը Ռուսական բանակը կատարելապէս յոգնե-ցուցած էր : Այս նկատումներով Հայման անհրա-ժեշտ չը նկատեց նոյնմըն 5-ին վտանգաւոր յար-ձակում մը ընել : Այս Ռուս հրամանատարին վրա-նին մէջ տեղի ունեցած ժողովին մէջ , հայկական ծագումով Թարնաֆէյ անուն սպայ մը , որ պատե-րազմի պահուն մէկէ աւելի անդամներ իր արժանիքը երեւան բերեր էր , եւ որ էրզրումը անձնուպէս լաւ կը ճանչնար , յանձն առաւ դուրսի Ազգի անմիջը գրաւել , եթէ իրեն յանձնուէր երեք գումարտակ-ներու հրամանատարութիւնը եւ վերջապահեալ ամբողջ վաշտ մը : Իր առաջարկութիւնը նախ ար-համարուեցաւ իր ծաղրելի ըմբ. մը , բայց երկուս-նորդ հազարապետի-տեղակալը այնքան ջանադիր եւ այնքան խանգարուաւ էր որ , վերջապէս յաջողեցաւ իր կարծիքը դրօշմիլ բարձրագոյն սպաներու մտքին մէջ : Հայման ինքն իսկ , յանդուգն եւ անվախ ա-

ռաջնորդ մը , իր կարծիքներուն համաձայն՝ էր , բայց աւելի զգուշաւոր հատուածական զօրավա-րները , յիշելով փառքուշտաւոր հրազեններով պաշտ-պանուած ամբողջութիւններու չորս պատահած վերջին արկածները զինք առժամանակեայ կերպիւ համոզե-ցին Թարնաֆէյի առաջարկութիւնը չի քաջալերել : Վերջապէս սակայն երբ երկուստեք հայր իր յաղ-թանակը տարաւ , եւ կարգադրութիւնները , ոչ միայն Ազգի ամբողջին վրայ յարձակուել , որ իշ-խելով ամբողջ արեւելեան շարքի ամբողջներուն վը-րայ , իսկապէս դիւքին լռանալին կը ներկայացնէ , ալ որոշուեցաւ իւր նեցուկ , համապէս յարձակում մը եւս ընել Քիւրտիսի բերդակին մօտ , Հարաւ-Ս-րեւմտեան ձախտէն :

Ազգի յարձակումին յատկացուած սառը գումա-տակներէ բաղկացող ուս զօրավա-րները , կէս գիշերին Լուսաւորիչ վանքին մօտ հաւաքուեցան : Ասոնք աջը կը ներկայացնէին : Մինչ ասան եւ վեց գումարտակներէ կազմուած ձախ սիւնակը , քաղա-քին հարաւային կողմը , երկ-Տաղի վրայ կը կու-տակուէր : Թարնաֆէյ երեք գումարտակներու զօրեւ անցած յարձակումը սկսաւ , իրեն նեցուկ ունեա-լով դաշտային զօրավա-ր մը հրամանատարութեան տակ եօթը գումարտակներ : Ասոնք մուխին մէջ ան-տես , երկու մղոն մը ետեւ թողուած էին : Քաջա-սիրտ երկուստեք հազարապետը , դաշտային մարդ-կացի մը ընկերակցութեամբ , լուի առաջ շարժեցաւ մինչեւ Բերդին երեք Գաւառ մղոն հեռավորու-թեամբ : Հոս իր մարդիկը անխափ , թողուց եր կու գումարտակներ , անոնց հրահանգ տալով որ հրաշանաձգութեան ձայն լսուելուն պէս յաւաք խա-

ղան , եւ ինք անշուշտ դէպի յառաջ սողաց : Իր մարդոց կարթնաւոր սանդուխներ հայթայթուած էին . եւ որոշեց սանդուխները Մէճիտիէ բերդի անկիւնը ուղղել : մինչ ինք գումարտակին մնացած մասով բաց կիրճէն ամբողջեան մէջ մտաւ :

Թրքական աղբիւրներէ կը տեղեկանաւք թէ , Ա-զգիի բերդի Մէճիտիէ կիսաշրջանակին մէջ պահ-նորդ մը , արշալոյսէն առաջ աղմուկ մը կը լսէ եւ հետեւեցնելով որ մեծկակ զօրաբաժին մը կը մօ-տենայ , եղելութիւնը պահակներու լալային կիմա-ցնէ , բայց այս վերջինը կը դժկամակի մարդուն վկայութեամբ հաւատք ընծայել : Արեւածագին կի-սաշրջանակի պահակները տեղեկացան որ պահնորդը չէր սխալած , տեսնելով որ ոռոսական զինուորնե-րու երկու խումբեր յանկարծ չէնքը կը մոտենէին : մին գիւնացի եղբւրքէն . միւսը ետեւի բաց կիրճէն , եւ մարդիկը զէնքերին ձեռք առնելու իսկ ժամանակ չունեցած , ոռոսները դիւքին տիրացած էին : Այս գուրս ցցուած ամբողջութեան ետեւի կողմը , 1200 հարստայի չափ հեռուն գտնուող Ազգի բերդին հրա-մանատարը , Մէճիտ փաշա , իրարանցումը լսելով , պատերազմին սկիզբէն ի վեր իրեն ցոյց տուած սո-վորական վեհանախութիւնով ու փութկաւորութիւնով Տրապիզոնէն նոր հասած զօրագունտէն կէս գու-մարտակի զրուսը անցաւ անմիջապէս եւ փութաց աղմուկին պատճառը ստուգելու :

(Շարունակելի)

Ի Խ Թ Ա Ր

Էլան կազմեց աշխատանքի
համաձայնիչ օրան միւրիւններու
պօնէիներով սէնէի հալիւնին տօ-
գուզընը այլընտ ապուրնադըմը-
զը տէր խաթըր Իտէրէք, պիւս
Թէնիւր պօրհլարընը էօտէմէի-
տիւրէր:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

ՊէրՈՒԹ վուգուսթընտան
տօլայը վիեննանըն Չայր կազե-
թաւընտ շու կիպի եազըմըն տըր-
«Շէհրին» հալի մուհարէպէտէն
չըգըմըն պէնդիօր: Պիւթիւն
տիւքեանլար գաբալը տըր: սօ-
գազարտա թիւրք գարուգօլու տա-
լիմ կէզմէքտէ տիւր: Արապալար
էօլիւ վէ եարէլի թաշըլօրլար:
Թաադիպ օլընան խրիսթիանլար
իմտաւտ պաղըրմագտա տըրլար:
Բազար սապահը սաաթ 8 րատ-
տէլէրինտէ 1000 գատար իսլամ-
լար էլ Մասթրախա մահէլէսինէ
գօշուպ, կաթօլիկէրին քիլիսէսի
իւզէրինէ հիւնուս իթտիւրէր: Քիլիսէ
վազթը օլտըղընտան, էհալի տէհ-
չէթլէ տըշարը տէօքիւլաիւ վէ էվ-
լէրին եիւքսէլէրինտէն սիւահ
տարպէլէրի պաշաւը: Թիւրք
ժանտարմալար պիւր գաշ էլ սիւահ
աթտըլար վէ 30 լէշ եէրէ սէրիւ-
տի: Տիկէրլէրի գաշտըլար:
Փազաթ իքի խանէյէ հիւնուս ի-
տուպ, զըլլճաւան կէշիւրալէր:
Սօնրա իսլամլար Սէլիմ էֆ. նամ
խրիսթիան ճէվահիրճիւնին տիւք-
եանընա հիւնուսէ սահիպինի
գաթլ իթտիւր վէ մալլէրի գա-
բըշտըլար, տահա տիկէր Փաթիլի-
ալար տալի տյնը Ֆէլաքէթէ տիւ-
չար օլտուլար:

«Հէր կիւն պու կիպի մէնզարէ-
լէր վազը օլըյօր: Եէվիլիէ պիւր
տիւգիւնա խրիսթիան էօլտիւրիւյ-
մէքտէ տիւր: Պրոշքիլի նամ Ամե-
րիկա հարպ վաբօրընտան 500 ա-
բէր ասալիշի մուհաֆազա իթմէք
իշիւն շէհրտէ սիւահլը կէզմէքտէ
տիւր:»

— Պապը Ալի Բուս վէ Աւս
տրիա էլիւրէրինէ պիւր պէյաննամէ
եօլլայուպ, սօն կիւնլէրտէ Պուլ-
կարիաւտան շէթէլէր կէշէրէք սի-
նօր Իւզէրինտէ պուլընան իսլամ
քէօլլէրի թախրիպ իթմիշ վէ է-
հալիի տաղըթմըն օլտըղըլարընը
պիւտիւրմիշ տիւր:

— Չէթէլէրի թաադիպ ու մահվ
իթմէք, ֆազաթ էհալիլէ թօգան-
մամագ իշիւն եէնի էմիւրնամէլէր
Բուսէլի ասքէրիյէ մէմուրլարընա
կէօնտէրիլմիշ օլտըղը սթանպուլ-
տան պիւտիւրիլօր: Պու էմիւրէ
մուսալիֆ պուլընան մէմուրլարա
չէտիտ ճէզալար վէրիլէնէք իմիշ...

— Էտիւրնէ վիլայէթիւնտէ Հայտէ
նամ Բուս քէօլլի թախրիպ իթ-

տիւրէն իպրահիմ պիւնպաշը թահթ
էլ հըֆը Էտիւրնէյէ կէօթիւրիւլիւպ
մուհաքէմէ իտիլէնէք տիւր:

ԻԹԱԼԻԱ պիւր գաշ հարպ վա-
բօրը Շարգա եօլլամագ իշիւն
պահրիէ հազըրընա էմիւր վէրմիշ
տիւր:

ԻՉՄԻՐՏԷՆ Մաքէթնիայա
կիլիմէք իշիւն 25,000 ասքէր հա-
զըր պուլընտըր Ճէրիտէլէր եա-
զրօր:

ՍԹԱՆՏԱՐՏՆ պէյանը իւզրէ
պիւրգաշ ինկիլիզ հարպ վաբօրլա-
րը Սէլանիք եազընլարընա կիթ-
մէք իշիւն էմիւր ալմըշար:

Քէզա պազը Ֆրանսըզ վաբօր-
լարընա անյը մաալտա էմիւրլէր
վէրիլմիշ:

ԳԼՐԳԻԻԼԻՍԷ սանճաղընտա
Պազիլքա նամ պուլկար քէօլլիւ
պաշապօղուզար խտարպ իտուպ,
էհալիտէն պիւր գըսմընը գաթլ
իթմիշլէր: Թիւրքէր պու գըրկը-
նը պուլկար ասըլարա հալի իտէ-
յօրլար:

ԲՕՎԶԱ Եօլընտա 60 պուլկար
էօլիսիւ պուլընմըն:

ՔԷՕԲՐԻԻԼԻԻՏԷ չարըտա
պիւր թիւրք ասքէրի 2 մէթէպէր
պուլկար գաթլ իթտի:

ԲՈՒՄ Բաթիլիքի էլիւրէր պիւր
պէյաննամէ վէրուպ, Մաքէթն-
նիաւտա էհալիլին 100 տէ 43ի
թիւրք վէ Բուս օլտըղընը կէօ-
թէրէրէք Մաքէթնիայա Սլաւ
մէմալիքի ատտ իթմէք խաթա
օլտըղընը իշիւն էլիւսէլէր իթմէմիշ:
վէ պուլկարլարա գարընը Բուս
րահիպէրին իտուսմէթտէ պու-
լընտըղըլարընա տայիւր օլան չիք-
եալիթլէրին էսասըզ օլտըղընը
պէյան իթմիշ տիւր:

ՏՍԻԼԻԷ

Սֆիւտա քի օսմալը գօմիսէրէ
Ալի Ֆէլուիս պէյ վիւլէլա րէիսի
իլէ սօն միւլազաթընտա Մաքէ-
թնիաւտա պուլկարլարըն թադիպ
վէ թաադիպաթըն թաթիլի-
տիլմէսի վէ գաշմըն օլտըղընը
Եէլլէրինէ ալտէթ իթմէլէրի իշիւն
լազըմ կէլէն մահէլլէրէ էմիւրլէր
վէրլմիշ օլտըղընը պէյան իթմիշ
տիւր:

ԲԷՐԸԷՆՊԷ սապահար շէհրի-
միլէ վիւրուս իտէն Պուրկազ վա-
բօրը իլէ 500 տէն միւթէմագիլ
Մաքէթնիայա մուհաճիլլէ, կէլ-
տիլլէր: Պու եէնի կէլէն Փադի-
լէրէ մուս վէնէթ իթմէք իշիւն պիւր
գօմիսիւն թէշքիլ օլընմըն օլուպ
իանէ թօրլանմագտա տըր:

ՍԱՔԷԹՈՆԻԱ Ըսեանընտա
ճանախէրանէ ֆէտաի նէֆա իթմիշ
օլան գահէմանլարըն իսթրահաթը
րուհի իշիւն եարըն Սօֆիաւտա Ս-
Քրալ քիլիսէսինտէ Հոգեհանգիստ
այնը րուհանիսի իճրա օլընճագ,
վէ պիւլալէրէ մաթէմագ պիւր ա-
լայ թէշքիլ օլընտա, Մաքէթնի-
աւտա եանմըն օլան քէօլլէրին վէ
վէֆաթ իտէն սէրվէրտէլէրին ի-

սիւլէրի եազըլը եաթթալար վէ
րէսիլէր շէհրին հէր թաադիլընա
կէպտիլլէնէք տիւր:

ԷՏԻՐՆԷ վիլայէթիւնտէն գա-
շուպ Պուրկազա իլթիճա իթմիշ
օլան պուլկար մուհաճիլլէրին մրգ-
տարը 10000ի կէշմիշ տիւր:

ՍՕՖԻԱՏԱՆ պա թէլէկարաֆ ի-
շիւր օլտըղընա պիւնէն, Սթրուսա
գազաւըրտա Քրէզնա նամ գարիէ-
տէ վուգու պուլան գաթլկաւտա
թիւրքլէրտէն 500 քիշի էօլմիշ,
ասըլաղ տիւնամիթ աթալարըմըն:

ԻՆԿԻԼԹՐԷԱ

ԹՐԱՆՍՎԱՆԱՆ մուհարէպէտինէ
էն պէօլիք միւսէպպիպի օլուպտէ՝
սօնուսա գուտար սէպթ կէօ-
թէրէն վէ պիւթիւն տիւնեանըն
տըգաթընը քէնտի իւզէրինէ
ճէլպիլմիշ օլան Մ. Չէմպրլէն
միւսթէմէթթաթ նէզաթլէթիւնտէն
պու կիւն իսթիֆա իթմիշ տիւր:
Պու մահիր վէ սէպաթլը գաթ
Պօթլէրին մէսէլէսի հէնուզ գա-
րանմաւտան տըգաթըն ումուսի
քէնտի իւզէրինտէն տիկէր թարա-
ֆա աթթ իթտիւրմէկէ մէյտան
վէրմէքսիլլէն պիւր կէօմիւր թա-
րիֆէսի թէլէսիս իտուպ, թէքրար
պիւթիւն տիւնեանը քէնտիսի իլէ
իշիւլ էլլէմէկէ մուվաֆազ օլտու,
Ֆազաթ պու մուվաֆազիլէթ տէ
վամի օլմայուպ կէօլիւր մէսէլէսի
նիհայէթ իսթիֆայա անը մէճ-
պուր իթտի:

Մ. Չէմպրլէնի իսթիֆա իթ-
մէսի իւզէրինէ վիւլէլա րէիսի
Մ. Պալիֆուրըն թէլլէթի իլէ գրալ
էտուարտ գապիլլէն շու եօլտա
թէշքիլ իթտի:

Մ. Օսթիւն Չէմպրլէն (Մ. Չէմ-
պրլէնի մաթտուսը) Մալիլէ նա-
զըրը:

Մ. Ալիօլտ Ֆօրսթըր հարպիէ
նազըրը: Մ. Ճօն Պ. օտրիք՝ Հին-
տիստան նազըրը: Լօրտ Սէլպորն
միւսթէմէքաթ նազըրը:

Իշպուս եէնի հիլլէթի վիւլէլա
մարտա գաւտար տէվամ իտէնէք
տիւր:

Ի Ո Ւ Ս Ի Ա

ԷՐՄԷՆԻ քիլիսէլէրին էմիւր վէ
սէրվէթիւնի միւսատէրէ իթմէք ի-
շիւն թային օլընան րուս մէմուր-
լար պիւր գաշ շէհրլէրտէ էհալի-
տէն մուսանէթ կէօրմիլլէրի իւզէ
րինէ հիւքիւմէթ ասքէր ճէլպի ի-
լէ էհալլիլէ գարըն սիւահ իսթի-
մալ իտէրէք, տաղ հայտուլթարը
կիպի ճէպրէն քիլիսէլէրէ կիւրմիշ
վէ հազըր պուլընան բարալարը,
իւթիլլազ ֆօմօլարը վէ թաադ-
էվադը վէ տէֆլէրլէրի զապթ ու
իսթիլա իթմիշլէր տիւր:

ՏՕԳԹ. Ն. Կ. ԹԱԳԻՈՐԵԱՆ

Նախկին երկարամեայ փորձառու
թիւշկ Ս Փրկչի (Ի. Կ. Պոլիս) Վիեն-
նայի եւ Պուլկար կառավարութեան
հիւանդանոցներու:

Մասնագէտ ներքին հիւանդութեանց
կնախտաբոյժ եւ մանկաբարձ:

Սօֆիայի յարգոյ հայ հասարակու-
թեան կազմարարութիւն՝ վերոյիշեալ
թիւշկը այս անգամ իր բնակարանը
փոխադրած է Թրկօլլաքա փողոց եւ
բասաթ Ս. Նիքօլայի ճիւղ անկիւնի
տունը, շէլ Բօտօբին դիմացը, Սօ-
ֆիայի բաղնիքներու դիմացի կաթիլ,
օթէլ Մաքէտօնիայի քովի զնորանէն
ոչ հեռու: Հիւանդ կընդունի ամեն
օր ժամը 9—12 եւ 2—6:

ՍՐԱՀ «ՍՍԷՏԻՆԷՆԻԷ»

Այս երկոյ ՆԱՏԷԹՏԱ Հայ. Դեր-
խմբին կողմանէ պիւր ներկայացուի
մասնակցութեամբ Սրալիո Վուլիմայի
եւ Չօի Մալիւրաթիի առաջնակարգ
բանթօմի արթիսթներու: Ներկայաց-
ուելիք խաղերն են:

ԵՐԿՈՒ ՍՐԱՍԻՏ ԲԱՐԵԿԱՄԵՆՐ
5 արար եղերեղք. երգ եւ պար օրիորդ
Քաթիլնայի, Օլկայի եւ Հճ. Յակոբի
կողմէն: մարմնամարզ Պ. Նանի Տրա-
կանօֆի կողմէն:

Իսկ ՆԱՏԷԹՏԱ խումբը պիւր ներ-
կայացնէ՝

ՎԵՀԱՆՁՆՈՒԹԵԱՆ ՏԻՊԱՐԸ

անուն կատակաւոր թատերախաղը
Կիւրակի Երեմի պիւր ներկայացուի
ՍՊԱՆԻՍ ՄՈՒՐԱՏԻԿ Եղիւր. 5 արար,
ՍԻՐՈՅ ԽԵՆԷԼ Թատերախաղան գօմէտի
3 արար

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՊՈՒԼԿԱՐԵԼԷ—ՎԱՅԵԼԷ—ՏԱՅԵԼԷ
3 ՕՐԻՆԵՑ

ԱՍՏԱՏՈՒՐ ՄԿՐՏԵՑԵԱՆ

Հրատարակուած են ստալին 7
պրակները եւ մնացեալին տպա-
գրութիւնը մեծ փութով յառաջ կը
տարուի:

Բաժանորդագրութիւնը զեռ կը
չարուակուի:

Բաժանորդագրուելիս 5 ֆր. կանխիկ
ճամբու ծախքը միւր վրայ:

Փափաքողք բաժանորդագրուելու
համար գիմնելու են Մասնախումբիս
գանձապետին հետեւեալ հասցեով՝

Տ. Մասքիոս Յակոբեան—Սօֆիա

ԾԱԽՈՒԻ ԳԻՐԲԵՐ

ՆՈՐ ԵՐԿԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՅ ՀԱՅ-
ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. ունի
տպագրութիւնով աւելի ճոխացած ու բա-
րեփոխուած է, եւ հակառակ գէոյն
աժանութեանը կը պարուստակէ սոց-
ցային հին եւ նոր խիստ շաւ նր
գեր: Դիւ 1 Ֆր.

ՆԷՏԱ կամ ՄԱՄԻՍ ՊԱՏԱՆԸ,
Պուլկարի ազատութիւնէն տալ
Պուլկար գիւղացիին Թուրքիէ կը-
րած տառապանքները ու անոնց նիստ
ու կազը կը պատկերացնէ: Եւ հե-
տաքրքրական:

Գին 50 ՍԱՆՔ.
ՀԱՅԵՆԻԿԻ ԶՈՂՆԵՐ: Պատկըմը
Տաճկահայաստանի իրական կեանքէն,
գրեց Ղ. Նահապետեան:

Զեղչեալ Գին 1 ՅԲ.
ԹԻՍՊԱՐՏ Ա. հատը (162 Երես) 1 Ֆր.
ԹԻՍՊԱՐՏ Բ. հատը (432 Երես) 2 Ֆր.

Այս գիրքերը տառաւոր համար
պէտք է գիմնել Բրաւուլի խմբաւոր-
ութեան, բօթի ճախքը 10ակն
սանթիմ միտակը զրկելով. իսկ գիր-
քերու արժէքին համար, Եթէ ուրիշ
գիւրութիւններ պակսին, կ'չորդնաւի
նամակագրօյ՝ 10 Օ/Ո զեղչով:

Печатница Взаимность Вари.

Одговорник Н. Драгач